Պարույր Սևակ

Փակիր աչքերդ

Պատահում է և... շա՛տ հաճախ,
Մարդ մտովին կրակում է իրեն վրա՝
Հստակ ջրի կամ հայելու,
Ինչ-որ մեկի աչքերի մեջ արտացոլված իր պատկերին,
Եվ տեղն ու տեղն սպանվում է:
Բայց մնում է նրա երկրորդ օրինակը՝
Ինքն է մնում - մնում ենք մենք:
Եվ ինքներըս առանց ողբի մեզ թաղելով՝
Սկսում ենք ապրել նորից
Նախ՝ բուսական-կենդանական,
Իսկ բյուրավոր դարեր հետո՝
Նաև մարդու կյանքով ծանր ու դժվարին:
Եվ տևում է այս ամենը
Անծայրածիր մի պահ գուցե,
Գուցե շաբաթ մի անսահման
Կամ թերևըս մի կարճ տարի...
Տե՛ր իմ աստված, դու լա՛վ գիտես,
Թե ես քանի՛-քանի՛ անգամ
Այս սրախիճ - տատասկապատ ճանապարհը
Կրկընել եմ ոտաբոբիկ:
Եվ հոգնե՛լ եմ,

Շա՜տ եմ հոգնել
Թե՛ ինքըս ինձ սպանելուց,
Թե՛, առավել, վերապրելուց...
Եվ կարիք կա՞,
Որ ես նորից նու՛յնը փորձեմ՝
Այս անգամ էլ ինքս ինձ վրա կրակելով
Ա՛յս աղջկա աչքերի մեջ:
. . . . . .
Փակի՛ր աչքերդ, սիրելի՜ս.
Սարսափով եմ ես մտածում,
Որ կարող է այս անգամ էլ ե՛ս չսպանվեմ,
Այլ... ավիրեմ քո՛ աչքերը...
Փակի՜ր աչքերդ, սիրելի՛ս...

20.III.1964թ.
Դիլիջան